

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## Ձ Ե Կ ՈՒ Յ Ց

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ – 2020

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
2.	ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ	4
3.	ԸՆՏՐԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ	5
4.	ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ	6
5.	ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.	8
	ՀԱՎԵԼՎԱԾ 1 (ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ)	14

# 1. ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

ԱՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից 2020թ. հունվար-փետրվար ամիսներին անց է կացվել քաղաքացիների անհատական բնակելի շենքերի շինարարության դիտարկում, որով խնդիր էր դրվել ուսումնասիրել և ընդլայնել բնակարանային շինարարության վիճակագրության համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը: Դիտարկումը նաև հնարավորություն ընձեռեց ոչ միայն համալրել բնակարանային շինարարության վիճակագրությունն անհրաժեշտ լրացուցիչ ցուցանիշներով, այլև կատարելագործել այդ ցուցանիշների հաշվարկման գործիքակազմն ու մեթոդաբանությունը:

Հետազոտությունն իրականացվել է ԱՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված հարցաթերթով:

Հարցաթերթերում ներառված ցուցանիշները հնարավորություն են ընձեռել տեղեկատվություն ստանալ գործարկված և շինարարության ընթացքում գտնվող անհատական բնակելի շենքերի շինարարական աշխատանքների ընթացքի և կատարված ծախսերի վերաբերյալ: Թարմացվել են նախորդ տարիներին ձևավորված բազաները:

## 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Սույն հետազոտության հիմնական նպատակն էր անհատական բնակարանային շինարարության հաշվառման վիճակագրության կատարելագործումը: Դիտարկման արդյունքները հնարավորություն կտան.

- *շրջանային կտրվածքով ստանալ ամբողջական և հավաստի տեղեկատվություն անհատական բնակարանային շինարարության վերաբերյալ,*
- *բարձրացնել տեղեկատվության որակը,*
- *համալրել պաշտոնական վիճակագրության շրջանակում բնակարանային շինարարության վերաբերյալ առկա տեղեկատվության բազան նոր ցուցանիշներով,*
- *թարմացնել նոր կառուցվող բնակելի շենքերի ռեզիստորը և պարբերաբար դիտարկել շինարարական աշխատանքների ընթացքը:*

### 3. ԸՆՏՐԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հետազոտության ընտրանքի իրականացման համար տեղեկատվության աղբյուր է հանդիսացել քաղաքաշինության բնագավառում կառավարման պետական լիազորված մարմնի կողմից 2017-2019թթ. տրամադրված անհատական բնակարանային շինարարության թույլտվությունների ցանկը և 2017 թվականին իրականացված Անհատական բնակարանային շինարարության ընտրանքային հետազոտությամբ արդեն իսկ ստեղծված բազան: Ընդ որում, գլխավոր համակցության ձևավորման ժամանակ հաշվի են առնվել առկա ֆինանսական և աշխատանքային ռեսուրսային սահմանափակումները և այդ ռեսուրսների շրջանակում՝ հնարավորինս ներկայացուցչական տվյալների ստացման անհրաժեշտությունը: Արդյունքում, հետազոտության մեջ ընդգրկվել են ք. Ստեփանակերտն ու բոլոր շրջանները:

Հետազոտության ընտրանքում ընդգրկված անհատական բնակելի շենքերի համակցությունը կազմել է 354 միավոր, որի բաշխվածությունն ըստ շրջանների արտացոլված է ստորև բերված աղյուսակում.

	Հետազոտության մեջ ընդգրկած բնակելի շենքերի քանակը, հատ	Տոկոսով՝ ընդամենի նկատմամբ
<b>Ընդամենը</b>	<b>354</b>	<b>100.0</b>
ք.Ստեփանակերտ	271	76.6
Ասկերան	14	4.0
Հաղբույթ	11	3.1
Մարտակերտ	6	1.7
Մարտունի	34	9.6
Շահումյան	2	0.6
Շուշի	5	1.4
Քաշաթաղ	11	3.1

Սույն հետազոտության իրականացման համար կիրառվել են վիճակագրական այնպիսի ստանդարտ գործիքներ, ինչպիսիք են ընտրանքի կազմակերպումը (որոշակի, վերը նշված առանձնահատկություններով), ծրագրային ապահովումը և այլն:

#### 4. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ

Անհատական բնակելի շենքերի (այսուհետ բնակելի շենքեր) վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման աշխատանքների ողջ գործընթացն իրականացվել է հարցազրուցավարների կողմից, շինարարության պատվիրատու հանդիսացող ՏՏ-ի չափահաս անդամի անմիջական հարցումների միջոցով:

Մինչ այդ, ընտրանքային հետազոտության նախապատրաստման և անցկացման նպատակով իրականացվել են հարցազրուցավարների հրահանգավորման աշխատանքներ, նրանց են հանձնվել դիտարկման համար անհրաժեշտ հարցաթերթերը, լրացման հրահանգները, ինչպես նաև հետազոտվող բնակելի շենքերի ցուցակները և հեռախոսահամարները:

Հրահանգավորման ընթացքում հարցազրուցավարներին պարզաբանումներ են տրվել հարցաթերթում ներառված ցուցանիշների լրացման, քաղաքացիների կողմից հարցաթերթի լրացմանը մասնակցելուց հրաժարվելու, ինչպես նաև այլ դեպքերի ժամանակ հարցաթերթի լրացման առանձնահատկությունների վերաբերյալ:

Ստացվող տեղեկատվության հնարավոր բարձր որակ ապահովելու նպատակով իրականացվել են նաև մի շարք միջոցառումներ հետազոտության անհրաժեշտության և դրա նպատակների պարզաբանման, հարցաթերթերի լրացման առումով հետազոտության մեջ ընդգրկված քաղաքացիների ակտիվության բարձրացման և վերջիններիս կողմից պրակտիկ օժանդակություն ցուցաբերելու նպատակով:

Հարկ է նշել, որ հետազոտության ընթացքում հարցաթերթերում զետեղված հարցերին մասնակիորեն պատասխանելու կամ այլ դեպքերը նվազագույնի հասցնելու նպատակով քաղաքացիներին տրվել են

լրացուցիչ այլ պարզաբանումներ հետազոտության կարևորության մասին:

Տվյալների հավաքագրումն իրականացվել է ըստ շրջանների: Դաշտային աշխատանքների արդյունավետության ապահովման նպատակով՝ այդ աշխատանքները պարբերաբար վերահսկվել է ՀՈՒ Բաժնի կողմից:

Հետազոտության արդյունքների մուտքագրումն իրականացվել է համապատասխան ծրագրային ապահովման միջոցով, որի հիման վրա էլ կազմվել են ելքային աղյուսակները:

## **5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Սույն հետազոտության ընթացքում տեղեկատվություն է հավաքագրվել 354 բնակելի շենքերի վերաբերյալ:

Այն տեղեկատվությունը, որը վերաբերվել է հետազոտված բնակելի շենքերի ընդհանուր բնութագրերին, վերլուծական իմաստով խմբավորվել է ըստ հետևյալ հատկանիշների.

- շինարարական աշխատանքների ընթացքը,
- դրանց պատրաստվածության աստիճանը,
- 2019թ. կատարված ծախսերը:




	Ընդամենը	այդ թվում՝				
		ընթանում են շինարարական աշխատանքներ	չեն ընթացել շինարարական աշխատանքներ	դեռևս չի սկսվել	որից՝ ժամանակարարապես դադարեցված	գործարկված
<b>Ընդամենը</b>	<b>354</b>	237	117	29	26	62
ք.Ստեփանավերտ	271	176	95	26	10	59
Մակերան	14	10	4	-	4	-
Հայրուք	11	10	1	1	-	-
Մարտավերտ	6	3	3	-	3	-
Մարտունի	34	28	6	-	6	-
Շահումյան	2	2	-	-	-	-
Շուշի	5	2	3	2	-	1
Քաշաթաղ	11	6	5	-	3	2

Հետազոտված 354 բնակելի շենքերից միայն 237-ում կամ 66.9 տոկոսում են ընթանում շինարարական աշխատանքներ: Ընդ որում, նշված ցուցանիշն ըստ շրջանների ունի հետևյալ բաշխվածությունը. Շահումյանում՝ 100.0, Հաղրություն՝ 90.9, Մարտունիում՝ 82.4, Ասկերանում՝ 71.4, քաղաք Ստեփանակերտում՝ 64.9, Քաշաթաղում՝ 54.5, Մարտակերտում՝ 50.0, Շուշիում՝ 40 տոկոս:

Ըստ հետազոտության արդյունքների շինարարական աշխատանքներ չեն ընթացել 117 բնակելի շենքերում, որը կազմում է ընդամենի 33.1 տոկոսը (հավելված 1, աղյուսակ 1, 2, 3):

Հետազոտված բնակելի շենքերի շինարարական աշխատանքների ընթացքը բնութագրող ցուցանիշները շրջաններով արտացոլված է գծապատկեր 1-ում:

Գծապատկեր1. Շինարարական աշխատանքների ընթացքի ցուցանիշները, շրջաններով (%)




Վերը նշված աղյուսակի տվյալներով շինարարական աշխատանքների ընթացքի բացակայությունը պայմանավորված է, ինչպես շենքերի պատրաստվածության տարբեր աստիճաններում դրանց ժամանակավոր դադարեցմամբ, շինարարական աշխատանքները դեռևս չսկսելու, այնպես էլ ամբողջությամբ ավարտված կամ գործարկված լինելու հանգամանքով:

Բնակելի շենքերն ըստ պատրաստվածության աստիճանի դիտարկելիս, որը չափազանց կարևոր է բնակելի շենքերի ռեգիստրի ձևավորման և շենքերի շինարարության հետագա ընթացքը վերահսկելու առումով, պարզվել է, որ գերակշռում են 51-80% պատրաստվածություն ունեցող շենքերը, որոնք կազմել են

ընդամենի 26.8 տոկոսը: Հետագուոված շենքերի համակցությունում տեսակարար ավելի ցածր կշռով առանձնացվում են 81-99 տոկոս պատրաստվածություն ունեցող շենքերը, որոնք կազմել են 11.3 տոկոս: Ընդհանուր առմամբ նշված նկարագիրը բնութագրական է նաև շրջանային դիտարկման պարագայում (հավելված1, աղյուսակներ 4,5,6):

Գծապատկեր 2. Շենքերի պատրաստվածության աստիճանի բաշխումը շրջաններով, %



Ընդհանուր առմամբ, ըստ հետազոտության տվյալների 2019թ-ին բնակելի շենքերի վրա **կատարված ծախսերն ըստ շրջանների** բնութագրվել են հետևյալ կերպ՝ ք. Ստեփանակերտում իրականացվել է 1.2 մլրդ դրամի շինարարություն, Մարտունու շրջանում՝ 167.8 մլն դրամի, Հաղրուծի շրջանում՝ 73.6 մլն դրամի, Ասկերանի շրջանում՝ 39.4 մլն դրամի, Շուշիի շրջանում՝ 28.5 մլն դրամի, Մարտակերտի շրջանում՝ 26.4 մլն դրամի, Քաշաթաղի շրջանում՝ 19.1 մլն դրամի, Շահումյանի շրջանում՝ 1.0 մլն դրամի:

### **Հետազոտության արդյունքները հնարավորություն տվեցին.**

- բարձրացնել բնակելի շենքերի վերաբերյալ տեղեկատվության ամբողջականությունն ու որակը,
- համալրել պաշտոնական վիճակագրության շրջանակում բնակարանային շինարարության վերաբերյալ առկա տեղեկատվական բազան
- ուսումնասիրել բնակարանային շինարարության շրջանային կառուցվածքը և ծավալները:
- թարմացնել նոր կառուցվող շենքերի ռեզիստրը:

*ՀԱՎԵԼՎԱԾ 1*

*(ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ)*

Աղյուսակ 1

**Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքը**

(հատ)

	Ընդամենը	այդ թվում՝	
		ընթանում են շինարարական աշխատանքներ	չեն ընթանում շինարարական աշխատանքներ
<b>Ընդամենը</b>	<b>354</b>	237	117
ք.Ստեփանակերտ	271	176	95
Ասկերան	14	10	4
Հաղրութ	11	10	1
Մարտակերտ	6	3	3
Մարտունի	34	28	6
Շահումյան	2	2	-
Շուշի	5	2	3
Քաշաթաղ	11	6	5

Աղյուսակ 2

**Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի կառուցվածքը, շրջաններով**

(%)

	Ընդամենը	այդ թվում՝	
		ընթանում են շինարարական աշխատանքներ	չեն ընթանում շինարարական աշխատանքներ
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>66.9</b>	<b>33.1</b>
ք.Ստեփանակերտ	100.0	64.9	35.1
Ասկերան	100.0	71.4	28.6
Հաղրութ	100.0	90.9	9.1
Մարտակերտ	100.0	50.0	50.0
Մարտունի	100.0	82.4	17.6
Շահումյան	100.0	100.0	-
Շուշի	100.0	40.0	60.0
Քաշաթաղ	100.0	54.5	45.5

Աղյուսակ 3

**Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի  
բաշխման կառուցվածքը, շրջաններով**

(%)

	Ընդամենը	այդ թվում՝	
		ընթանում են շինարարական աշխատանքներ	չեն ընթանում շինարարական աշխատանքներ
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>
ք.Ստեփանակերտ	76.6	74.3	81.2
Ասկերան	4.0	4.2	3.4
Հաղրուօ	3.1	4.2	0.9
Մարտակերտ	1.7	1.3	2.6
Մարտունի	9.6	11.8	5.1
Շահումյան	0.6	0.8	-
Շուշի	1.4	0.8	2.6
Քաշաթաղ	3.1	2.6	4.3

Աղյուսակ 4

**Բնակելի շենքերի պատրաստվածության աստիճանը**

(հատ)

	Ընդամենը	այդ թվում՝				
		մինչև 20%	21 - 50%	51 - 80%	81 -99%	100%
<b>Ընդամենը</b>	<b>354</b>	73	92	95	40	54
ք.Ստեփանակերտ	271	59	65	61	34	52
Ասկերան	14	-	5	8	1	-
Հաղրուօ	11	3	4	3	1	-
Մարտակերտ	6	1	4	1	-	-
Մարտունի	34	9	9	13	2	1
Շահումյան	2	1	1	-	-	-
Շուշի	5	-	1	3	-	1
Քաշաթաղ	11	-	3	6	2	-



Աղյուսակ 5

**Բնակելի շենքերի պատրաստվածության աստիճանի կառուցվածքը**

(%)

	Ընդամենը	այդ թվում՝				
		մինչև 20%	21 - 50%	51 - 80%	81 - 99%	100%
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>20.6</b>	<b>26.0</b>	<b>26.8</b>	<b>11.3</b>	<b>15.3</b>
ք.Ստեփանակերտ	100.0	21.8	24.0	22.5	12.5	19.2
Ասկերան	100.0	-	35.7	57.2	7.1	-
Հաղրուք	100.0	27.3	36.3	27.3	9.1	-
Մարտակերտ	100.0	16.7	66.6	16.7	-	-
Մարտունի	100.0	26.5	26.5	38.2	5.9	2.9
Շահումյան	100.0	50.0	50.0	-	-	-
Շուշի	100.0	-	20.0	60.0	-	20.0
Քաշաթաղ	100.0	-	27.3	54.5	18.2	-

Աղյուսակ 6

**Բնակելի շենքերի պատրաստվածության աստիճանի բաշխման կառուցվածքը**

(%)

	Ընդամենը	այդ թվում՝				
		մինչև 20%	21 - 50%	51 - 80%	81 - 99%	100%
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>
ք.Ստեփանակերտ	76.5	80.8	70.7	64.2	85.0	96.2
Ասկերան	4.0	-	5.4	8.4	2.5	-
Հաղրուք	3.1	4.1	4.3	3.2	2.5	-
Մարտակերտ	1.7	1.4	4.3	1.0	-	-
Մարտունի	9.6	12.3	9.8	13.7	5.0	1.9
Շահումյան	0.6	1.4	1.1	-	-	-
Շուշի	1.4	-	1.1	3.2	-	1.9
Քաշաթաղ	3.1	-	3.3	6.3	5.0	-

Աղյուսակ 7

**Բնակելի շենքերի շինարարության վրա կատարված ֆինանսական ծախսերը**

	Ընդամենը. մլն դրամ	Տոկոսով. ընդամենի նկատմամբ
<b>Ընդամենը</b>	<b>1 536.7</b>	<b>100.0</b>
ք.Ստեփանակերտ	1 180.9	76.8
Ասկերան	39.4	2.6
Հաղրութ	73.6	4.8
Մարտակերտ	26.4	1.7
Մարտունի	167.8	10.9
Շահումյան	1.0	0.1
Շուշի	28.5	1.9
Քաշաթաղ	19.1	1.2

Հարցաթերթի համարը

--	--	--	--



**ԱՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

*ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ*

Շրջան ..... 

--	--	--

Բնակավայր..... 

--	--	--

Հասցե.....

Անուն ազգանուն .....

Հեռախոսահամար .....

**ՄԻԱՆՎԱԳ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ**

*ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

**1** Շենքը ներկայումս կառուցվո՞ւմ է:  
Լրացնել մեկ վանդակ:

Այո	1
Չի սկսվել	2
Դադարեցված է	3
Ավարտված է	4

**3** Որքա՞ն են 20\_\_ թվականին  
շենքի վրա կատարված ծախսերը:

\_\_\_\_\_ հազ. դրամ

**2** Ի՞նչ չափով է շենքը պատրաստ տվյալ պահին:

Լրացնել մեկ վանդակ:

մինչև 20%	1
21-50%	2
51-80%	3
81-99%	4
100%	5

**Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ ՈՒ Թ Յ ՈՒ Ն    Հ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Յ ՈՒ Թ Յ Ա Ն    Հ Ա Մ Ա Ր**

Կատարողի անուն, ազգանուն \_\_\_\_\_

\_\_\_\_\_  
/ստորագրություն/

Լրացման ամսաթիվը « \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թ.